ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-14/4» ԾԱԾԿԱԳՐՈՎԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

10.09.2019թ.
ժամը 15^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՌԱ վարչության իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, Գ. Ուստյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՌԱ վարչության իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, Է. Համբարձումյան,

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի էլեկտրոնային-գիտական գրադարանի գրադարանավար Ա. Հակոբյան,

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի գիտնական-վերլուծաբան Ա. Դավթյան,

հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

<u>« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-14/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.</u>

(Լ. Թազայան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Լ. Թազայան)

1.1 05.09.2019թ.-ին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-14/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց նրա ներկայացրած հայտարարությունները համարել Ֆրականությանը համապատասխանող:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-14/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերն և իր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերին (տեխնիկական բնութագրերին) վերաբերող փաստաթղթերն ներկայացվել են սահմանված ժամկետում (առկա են) և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

1.3 Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի (1-ին, 3-րդ, 6-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով) տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) և որոշեց վերջինիս հայտարարել ընտրված մասնակից ըստ համապատասխան չափաբաժինների:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-14/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

1.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-14/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
(Լ. Թազայան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-14/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Գ. Ուտյան
Գնահատող	Է. Համբարձումյան
Գնահատող	Ա. Հակոբյան
Գնահատող	Ա. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ. Թազայան